

## Արձանագրություն թիվ 9

### ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

16 մարտի 2016թ.

ք.Էջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

#### **ՕՐԱԿԱՐԳ**

1. Ֆակուլտետի մասնագիտությունների արդյունավետության և նոր մասնագիտությունների ավելացման հնարավորությունների քննարկում:  
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
2. 2014-15 ուստարվա երկրորդ կիսամյակի ԵՊՀ ռեկտորատի կողմից ուսանողների շրջանում անցկացված դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ հարցման արդյունքների քննարկում:  
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
3. Ընթացիկ հարցեր:  
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/

**ԼՄԵՑԻՆ** - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ղեկանի ժ/պ, գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան նշված հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի կառուցվածքում գործող երկու „Կիրառական արվեստ” և „Դիզայն” մասնագիտությունների դիմորդների շարժը վերջին հինգ տարիների ընթացքում, ըստ որի, տարեց-տարի „Կիրառական արվեստ” մասնագիտության դիմորդների թիվը նվազել է ` 30-ից հասնելով 9-ի, ուստի տարածաշրջանում և աշխատաշուկայում պահանջարկի անկում է

նկատվում: Ելնելով մի շարք հանգամանքներից, մասնավորապես տնտեսագիտական, նպատակահարմար չէ շարունակել ընդունելություն իրականացնել վերոնշյալ մասնագիտությամբ: Մակայն „Դիզայն” մասնագիտության առումով նկատվում է դիմորդների կայուն հոսք, այդ իսկ պատճառով իմաստալից է կատարել ընդունելություն:

Մասնաճյուղի ՄԿՊԿ բաժնի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է , որ աշխատաշուկայում , տարածաշրջանի հիմնարկ ձեռնարկությունները և բարձր դասարաններում սովորողների մոտ ցանկություն կա „ Համակարգչային գրաֆիկա” ժամանակակից մասնագիտություն ստանալու առումով: Ընդառաջելով բնակչությունը և հաշվի առնելով առկա պահանջարկը 2016 թ. ընդունելիության ցանկում ընդգրկվել է նշված մասնագիտությունը և կատարվել են նախապատրաստական բոլոր աշխատանքները, առկա է ուսումնական պլանը, ընթացքի մեջ է կրթական ծրագրի կազմումը, կատարվում է նյութատեխնիկական բազայի համապատասխանեցում, ստեղծվում է համակարգչային նոր սրահ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ամբիոնի վարիչի ժ/պ Մ. Հարությունյանը տեղեկացրեց ընթացիկ աշխատանքների վիճակի մասին , մասնավորապես „Համակարգչային սրահի” և „Դիզայնի” լաբարատորիայի վերանորոգման և վերազինման մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ**— 1.մինչև 2016թ. մայիսի 25-ը նախնական ամրագրել ուսումնական պլանով նախատեսված կրթական մոդուլները կոնկրետ դասավանդողներին 2.մինչև օգոստոսի 25-ը դասավանդողները ներկայացնեն առարկայական փաթեթները/ պորտֆոլյոները/:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը և ներկայացրեց 2014-2015թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի ուսանողների շրջանում դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքները: Ծավալվեց բուռն քննարկում և վեր հանվեցին այնպիսի մտահոգություններ և հարցադրումներ, ինչպիսին են .

ա. Ուսանողների կարծիքները ավելի շատ սուբյեկտիվ են, քան օբյեկտիվ

բ. Այն դասախոսները, որոնք քննական պրոցեսում գնահատելու ժամանակ օբյեկտիվ են եղել , նրանք ստացել են ավելի ցածր , իսկ նրանք ովքեր նվիրել են գնահատականները, ուսանողների կողմից գնահատվել են բավականին բարձր:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գրեթե բոլոր դասավանդողները և նշեցին , որ հարցը քննարկվել է ամբիոնների 19.02.2016թ. թիվ 7 համատեղ նիստում, բոլոր

գնահատականներ բարձրաձայնվել, վերլուծվել և կատարվել են համապատասխան հետևություններ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հանձնարարել ամբիոնների վարիչներին ուսանողների կողմից մատնանշված թերությունները վերանայելու ուղղությամբ, տանել հետևողական աշխատանքներ և հնարավորության սահմաններում վերացնել նրանք:

Ընթացիկ հարցերի վերաբերյալ հանդես եկավ Ա.Շ.Մարգարյանը և նշեց, որ կարգապահական հարցերը եղել և մնում են կարևորագույն պահանջ ինչպես ուսանողների, այնպես էլ աշխատակիցների համար: Նա ևս մեկ անգամ հիշեցրեց այն մասին, որ համաձայն ԵՊՀ ԻՄ կարգապահական կանոնակարգի ուսանողներին 30 ժամ անհարգելի բացակայության դեպքում գրավոր նկատողություն է հայտարարվում դեկանի կողմից, 60-ի դեպքում տնօրենի, իսկ 90-ի դեպքում՝ հեռացվում է համալսարանից: Զեկուցողը մտահոգություն հայտնեց „Դիզայն” և „Կիրառական արվեստ,, մասնագիտության առաջին կուրսի վերաբերյալ, որտեղ կան ուսանողներ /Ա.Ալլադյան, Ա.Հարությունյան /,որոնք արդեն նկատողություն են ստացել դեկանի կողմից և մոտենում են 60 ժամի սահմաններին:Աշխատակիցների վերաբերյալ նշվեց, որ որոշ դասախոսներ հաճախակի խախտում են աշխատանքային կարգապահությունը և ստանում բանավոր զգուշացումներ և նկատողություններ: Նման կերպ շարունակելու դեպքում նրանք կստանան գրավոր նկատողություն և կարժանան ավելի խիստ պատիժների:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**– Ուսումնական խորհրդատուներ Դ.Զիբուխյանը և Բ.Մխիթարյանը, որոնք նշեցին, որ վերոնշյալ ուսանողների հետ ունեցել են անհատական զրույցներ, բացատրել և զգուշացրել են հետագա գործողությունների մասին,իսկ վերջին մեկ շաբաթվա ընթացքում նրանք անհարգելի բացակայություններ չեն ունեցել:

**ՈՐՈՇԵՑԻՆ**– Հետևողական լինել հաճախակի բացակայություններ ունեցող ուսանողների վարքագծին և նրանց հետ շարունակել բացատրական աշխատանքները:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ք.Հ.ՄԽԻԹԱՐՅԱՆ